# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի հանրապետության կոտայքի մարզի Ակունքի համայնք,
հասցե՝ գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72 հեռ.(0222)6-01-60
Էլ. փոստ ՝ akunqigyuxapetaran@rambler.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 դեկտեմբերի 2013թվականի N 44-Ն

### ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի ,հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը , համայնքի ավագանին որոշում Է՝

1. ՀաստատելԱկունքի համայնքի 2014 թվականի տարեկան բյուջեն՝ համաձայն հավելվածի:
2.Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարել վերաբաշխումներ , որոնց հանրագումարը չպետք է գերազանցի սույն որոշմամբ հաստատված չափաքանակների 15 % -ը :

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.............................. ԱՎԱԳՅԱՆ ՆԱՐԻՆԵ

2. ..............................ԱՎԵՏԻՍՅԱՆ ՔԱՋԻԿ

3.............................. .ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ՄԻՀՐԱՆ

4. ..............................ՄԿՐՏՉՅԱՆ ԳՈՌ

5..............................ՍԱՄՍՈՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

6. ..............................ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱԼԵՐԻԿ

7. ..............................ՏԻԳՐԱՆՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի հանրապետության կոտայքի մարզի Ակունքի համայնք,
հասցե՝ գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72 հեռ.(0222)6-01-60
Էլ. փոստ ՝ akunqigyuxapetaran@rambler.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 դեկտեմբերի 2013թվականի N 43

## ԱԿՈՒՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն « Համայնքային ծառայության մասին »Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1ին կետի «բ» ենթակետի ,Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 6,7,8-րդ կետերի , հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը ,համայնքի ավագանին որոշում է ՝

1. Սահմանել հավելավճար՝ Ակունքի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու , կամ համայնքային ծառայության բնագավառում աշխատակազմի համայնքային ծառայողների տվյալ աշխատակազմում ունեցած երկար տարիների (առնվազն հինգ տարի) աշխատանքային ստաժ ունեցող համայնքային ծառայողների պաշտոնային դրույքաչափի նկատմամբ :
2. Սահմանել հավելավճարի չափ ՝ պաշտոնային դրույքաչափի 10 տոկոսի չափով :

Համայնքի ավագանի

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.................................. ....ԱՎԱԳՅԱՆ ՆԱՐԻՆԵ

2................................ ...ԱՎԵՏԻՍՅԱՆ ՔԱՋԻԿ

3...................................ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ՄԻՀՐԱՆ

4. .................................ՄԿՐՏՉՅԱՆ ԳՈՌ

5...................................ՍԱՄՍՈՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

6. ................................ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱԼԵՐԻԿ

7. ................................ՏԻԳՐԱՆՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի հանրապետության կոտայքի մարզի Ակունքի համայնք,
հասցե՝ գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72 հեռ.(0222)6-01-60
Էլ. փոստ ՝ akunqigyuxapetaran@rambler.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 դեկտեմբերի 2013թվականի N 42-Ա

### ԱԿՈՒՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ , ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի պահանջներով , հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Ակունքի գյուղապետարանի 2014թվականի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը , հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ից :

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ............................... ԱՎԱԳՅԱՆ ՆԱՐԻՆԵ
2. ...............................ԱՎԵՏԻՍՅԱՆ ՔԱՋԻԿ
3. ............................... ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ՄԻՀՐԱՆ
4. ............................... ՄԿՐՏՉՅԱՆ ԳՈՌ
5. ...............................ՍԱՄՍՈՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
6. ............................... ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱԼԵՐԻԿ
7. ............................... ՏԻԳՐԱՆՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ

Հավելված

Ակունքի համայնքի ավագանու

2013 թվականի դեկտեմբերի 11-ի N 42 -Ա որոշման

# ԱԿՈՒՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը `13
2. Աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հ/հ | Հաստիքի անվանումը | Հաստիքի քանկաը | Պաշտոնային դրույքաչափը, դրամ | Ընդամենըը դրամ |
|---|---|---|---|---|
| Քաղաքական պաշտոն | | | | |
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 206 000 | 206 000 |
| **Հայեցողական պաշտոն** | | | | |
| 1 | Համայնքի ղեկավար տեղակալ | 1 | 160 000 | 160 000 |
| 2 | Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 108 000 | 108 000 |
| Համայնքային ծառայողներ | | | | |
| 1 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 160 000 | 160 000 |
| 2 | Գլխավոր մասնագետ-հաշվապահ | 1 | 150 000 | 150 000 |
| 3 | Առաջատար մասնագետ | 3 | 108 000 | 324000 |
| 4 | 1-ին կարգի մասնագետ | 2 | 84 000 | 168 000 |
| Տեխնիկական սպասարկման անձնակազմ | | | | |
| 1 | Վարորդ | 1 | 75 000 | 75 000 |
| 2 | Հավաքարար | 1 | 75 000 | 75 000 |
| Քաղաքացիական աշխատանք կատարող | | | | |
| 1 | Անասնաբույժ | 1 | 70 000 | 70 000 |
| | Ընդամենը | 13 | | 1 496 000 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Մ. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի հանրապետության կոտայքի մարզի Ակունքի համայնք,
հասցե՝ գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72 հեռ.(0222)6-01-60
Էլ. փոստ ՝ akunqigyuxapetaran@rambler.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 դեկտեմբերի 2013թվականի N 41-Ն

### ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի , « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18 -րդ կետի , ,հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը , համյանքի ավագանին՝ որոշում է՝

1. Սահմանել Ակունքի համայնքի 2014 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը համաձայն հավելվածի :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2014թվականի հունվարի մեկից :

Համայնքի ավագանի

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ................................ԱՎԱԳՅԱՆ ՆԱՐԻՆԵ
2. ................................ԱՎԵՏԻՍՅԱՆ ՔԱՋԻԿ
3. ................................ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ՄԻՀՐԱՆ
4. ................................ՄԿՐՏՉՅԱՆ ԳՈՌ
5. ................................ՍԱՄՍՈՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
6. ................................ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱԼԵՐԻԿ
7. ................................ՏԻԳՐԱՆՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
Ակունքի համայնքի ավագանու
2013թ դեկտեմբերի 11 - ի N 41 -Ն որոշման

Ակունք համայնքում 2013 թվականի համար սահմանված տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը

| Հ/հ | Տուրքերի տեսակները | Օրենքով սահմանված դրույքաչափը (դրամ) | Ավագանու սահմանված դրույքաչափը (դրամ ) |
|---|---|---|---|
| 1 | Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների ( ներառյալ՝ոչ հիմնական ) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ | | |
| | հիմնական օբյեկտների համար՝ | | |
| ա) | մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի,այդ թվում՝այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ | 0-15000 | 5000 |
| բ) | սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝ | | |
| բա) | 201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | 0-30000 | 20000 |
| բբ) | 501-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | 0-50000 | 50000 |
| բգ) | 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար մինչև | 0-50000 | 50000 |
| բդ) | 3001 -ից ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 100 000 | 1 00 000 |
| | ոչ հիմնական շինությունների տեղադրման համար | | |
| գ) | մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 0-3000 | 3000 |
| դ) | 20քմ և ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 0-5000 | 5000 |
| 2. | Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերա-կանգնման, արդիականացման աշխատանքների ( բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի ) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով | | |
| ա) | չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝ ստորգետնյա / հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն | 3000 | 3000 |
| բ) | բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների ( այդ թվում՝ ստորգետնյա ) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի ա ' ենթակետով սահմանված դրույքաչափի,կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով | | |
| գ) | նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա ) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա,սույն հավելվածի իմաստով , այն համարվում է նոր շինարարություն,, որի նկատմամբ կիրառվում են նոր | | |

| | | | |
|---|---|---|---|
| | շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը: | | |
| 3. | Համայնքի տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլատվության համար | 5000 | 5000 |
| 4. | Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է ՝ | | |
| 1) | Ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝յուրաքանչյուր եռամսյակի համար՝ | 0-17500 | 2500 |
| 2) | ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝յուրաքանչյուր եռամսյակի համար՝ | 1500-17500 | 2500 |
| 5. | Համայնքի տարածքում | | |
| ա) | բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար յուրաքանչյուր օրվա համար | 0-350 | 350 |
| բ) | հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլատվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար | 150000-200000 | 150 000 |
| գ) | խանութներում ,կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է | 30 000-60 000 | 30 000 |
| գա) | համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝ | | |
| | հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ | 1000-6000 | 6000 |
| | ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում | 0-1000 | 1000 |
| $5^1$ | համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլատվության համար | 50 000 | 50 000 |
| 6. | Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները(սաունաները) , խաղատները՝ ժամը 24.00 -ից հետո աշխատելու թույլատվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար | | |
| ա) | առևտրի օբյեկտների համար | 25000-50000 | 25 000 |
| բ) | հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար | 50000-100000 | 50 000 |
| գ) | բաղնիքների ( սաունաների )համար | 200000-500000 | 200 000 |
| դ) | խաղատների կազմակերպման համար | 500000-1000000 | 500 000 |
| ե) | շահումով խաղերի կազմակերպման համար | 250000-500000 | 250 000 |
| զ) | վիճակախաղերի կազմակերպման համար | 100000-150000 | 100 000 |
| 7. | Համաքաղաքային կանոններին համապատասխան Երևան քաղաքի և քաղաքային համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ | | |
| 8. | Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու | | |

| | | | |
|---|---|---|---|
| | թույլատվության համար մեկ քառակուսի մետրի համար՝ | | |
| ա) | ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար | 1000-2000 | 1000 |
| բ) | թունդ ալկոհոլային ( սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար | 2500-3500 | 2500 |
| գ) | այլ արտաքին գովազդի համար | 500-1500 | 500 |
| դ) | դատարկ գովազդային վահանակների համար | 700 | 700 |
| 9. | Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար ընթացիկ տարվա համար | 0-10000 | 500 |
| ա) | Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է | 50 000-100 000 | 50 000 |
| 10. | Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է | 0-10 000 | 10 000 |
| | Տեղական վճարներ | | |
| 1. | Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու,ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխ հատուցման վճար | | 5000 |
| 2. | Տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինման և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար | | 5000 |
| 3. | Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցների վճար | | 5000 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Մ. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի հանրապետության կոտայքի մարզի Ակունքի համայնք,
հասցե՝ գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72 հեռ.(0222)6-01-60
Էլ. փոստ ՝ akunqigyuxapetaran@rambler.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 դեկտեմբերի 2013թվականի N 40

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ԹԻՎ 12 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի ,հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը ,համայնքի ավագանին որոշում է ՝ Հաստատել 2013թվականի դեկտեմբերի 11-ի համայնքի ավագանու թիվ 12 հերթական նիստի օրակարգը.

1. Ակունքի համայնքի 2014 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին
2. Ակունքի գյուղապետարանի աշխատակազմի 2014 թվականի աշխատակիցների թվաքանակը , հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
3. Ակունքի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների պաշտոնային դրույքաչափի նկատմամբ հավելավճարի կիրառման կարգը և չափը հաստատելու մասին
4. Ակունքի համայնքի 2014 թվականի տարեկան բյուջեի հաստատման մասին

Համայնքի ավագանի

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ..............................ԱՎԱԳՅԱՆ ՆԱՐԻՆԵ

2. ..............................ԱՎԵՏԻՍՅԱՆ ՔԱՋԻԿ

3. ..............................ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ՄԻՀՐԱՆ

4. ..............................ՄԿՐՏՉՅԱՆ ԳՈՌ

5. ..............................ՍԱՄՍՈՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

6. ..............................ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱԼԵՐԻԿ

7. ..............................ՏԻԳՐԱՆՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ